

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն



ՄՈՎՍԷՍ Խորենացին ամենէն աւելի ժողովրդականութիւն վայելող հայ մատենագիրն համարուած է: Նորա ազդեցութիւնն իւր տոհմայնոց վրայ՝ իբրեւ աղբիւր անսպառ խոր գիտութեան և հմտութեան՝ անտարակոյս ամենամեծ էր: Հայագիր գրադրուած համար Խորենացիէն աւելի բարձր հեղինակութիւն չկայր. նա կոչուէր «Հայր քերթողաց և քերականից», նա էր «Պատմահայր Հայոց»: Խորենացույ հրապոյրքն՝ որպէս պատմագրի՝ յայնձ էր հաստատեալ, որ նա սեղմ՝ բայց աշխոյժ և յստակ ոճով կ'աւանդէր նախորդ ոչ մի հայ տարեգրաց մօտ գտուած և սակայն շատ իսկ Հետաքըննելի՝ Հայոց սկզբնական պատմութիւնը, սերտիւ կապակցելով զայն Աստուածաշնչի աւանդութեանց հետ ի ձեռն Հայկայ, որ և թոռն Յաբեթայ և Նահապետ Հայոց:

Իբրեւ ապացոյց Մ. Խորենացույ եղական ժողովրդականութեան, կարելի է՝ զատ յայլոց՝ մատենանիչ անել նորա պատմութեան գրչագիր օրինակաց բազմութիւնը, որ մինչև մեր օրերս պահուած են, թէ և անոնց հնազոյնն իսկ ԺԻՊԻՔ գործն անդր յանցնիր¹:

Մ. Խորենացույ Հայոց Պատմութեան առաջին տպագրական հրատարակութիւնն երբեք 1695 տարւոյն յԱմստերդամ, ուր յայնժամ հարուստ հայ գաղթականութիւն մի կայր. հոն տպագրուած են նա և Աստուածաշնչի Հայ Բարդմանութեան, Շարաւկանաց, Ժամագրոց, Մաշտոցի և այլ եկեւ.

ղեցական և տշխարհական գրոց առաջին հրատարակութիւնք:

Պժրաղգարար Խորենացույ Պատմութեան այդ իշխան հրատարակութիւնն (*editio princeps*) ընտիր գրչագրի համեմատ եղած չէր, վասն զի առ այն ի գործ տնուած օրինակն էր ի դասէ ձեռնամուխ (*interpolé*) կոչուած գրչագրաց²:

Արդէն իսկ ի սկզբանէ անտի ծանօթանալոյ արեւմտեան եւրոպացի գիտնոց ընդ Խորենացույ, նորա Պատմութիւնն ենթարկեցաւ քննադատութեան, և զուցէ այնպիսի խիստ և անողորմ՝ օրպիսին երբեք կատարուած չլինէր: Բիրլինի արքունի գրատան տնօրէն գաղղիացի արեւելագէտն Լա-Վրոս³,

2. Տես A. Baumgartner: Ueber das Buch «die Chrie», ի ZDMG, 1886, III, յէջ 457-516: Հմ. նա և իմ նշմարքս Մ. Խորենացույ Հայոց Պատմութեան գրչագրաց մասին, ի WZKM, 1893, I, յէջ 21-28:

3. Maturin Veyssère La-Croix ծնաւ ի Նանտ (Փրանկիոյ), ի 1661 ամի: Լա-Վրոս իւր նա լեզուի և գրականութեան մասամբ կատարած զննութիւններէն զատ, — յորոց նա Բառացան դժբաղդաբար ցարգ անտիկ ճանցած է, իսկ իւր մտածած «Զորս աւերածոց քննադատութիւն» անուարտ ճանցած, — Բոլղած է նա և իւր ժամանակ մեծ կարեւորութիւն ունեցող երկեր՝ աւել, զոչի և ուստե՛ւ լեզուաց նկատմամբ: Սորա ընտրելազոյն երկասիրութիւնն նամարուած է (գաղղ.) «Պոթ. քրիստոնեայնութիւն» 1726, յետ որոյ հրատարակեալ գտախոսել յաթոյն իմաստասիրութեան ի Փրանկիոյ վերջածով: Լէյքեյեի ընկեր լինելով Լա-Վրոս յայտնի էր իւր բարդական բարձր յատկութիւններով՝ իբրեւ մարդ: Նա

1. Տես «Մատենագրութիւնք» Մ. Խորենացույ, Բ. տպ., Վենետիկ, 1865, Յառաջաբան յէջ 7:

— որ ըստ իմ գիտութեանս՝ Հայ լեզուիս նշանաւոր հմտագողաց և սրամիտ քննադատից մին է, — առաջին եղաւ, որ տարակոյս յայտնեց Մովսիսի Պատմութեան արժանահաւատութեան մասին, որպէս և նկատմամբ թուականին՝ որում կը վերագրէին Սիսի վերջի 1720 տարւոյն իւր հրատարակած՝ Ն. Ենքորհայոց պատմական վիպերգութեան (« Ողբ Եղեհոյի ») առման ի թուրքաց յամի 1144) կցած ծածոթութեանց մէջ, և ապա իւր թղթակցութեանց՝ մէջ, ի սկիզբն 1730 ամին, առ Պաւլ Երնէտա Եւսրոյնակոյ և առանձինն առ երկու Վրաստեանն եղբարս՝ Վիլէլմ և Գեորգ, ի Լոնդոն, — որ յայնժամ պատրաստէին Խորենացւոյն Հայոց Պատմ. լատին թարգմանութեան հրատարակութիւնը, — Լա-Կրոս կը յայտնէ իւր գաղափարն, թէ Մովսէս աւելի առասպելագիր է քան թէ պատմագիր. « Moses fabulator potius, quam historicus Armenorum »¹, թէ նա կ'ապրէր ոչ ի Երէք դարու՝ որպէս ընդունուած էր կարծել, այլ մօտ Թրքե կամ Ժրք դարու, երբ Հայոց կ'իշխէին Բագրատունիք։ Իրեն կարծեօք այս բանն կը ցուցնէին նորա Պատմութեան մէջ յաճախ հանդիպած տարածամտութիւնը². որպէս, օրինակի համար՝ Խորենացւոյն Բաշղար ազգի յիշատակութիւնն (Բ. 6) յիշեք դարու նախ քան զՔրիստոս, մինչդեռ յայտնի է այդ ազգին բնաւն ի պատմութեան միայն մեր թուաւեկանին Զրբ դարում. Բայրեղոյ ամրոցին զոյուութիւնն (Խոր. Բ. 38) Սիւնի դարու յետ Քրիստոսի, մինչդեռ ըստ վկայութեան Պրո-

կոպիոսի Կեարացւոյ զայն հիմնած է Յուստինիանոս (De Aedif. Just. III. 4) ի Զրք դարու, Հուսկ Լա-Կրոս կը յայտնէ իւր կարծիքը նա և նկատմամբ վիճակին՝ որում պատկանէր պատմագիրն, և ըստ իւր ենթադրութեան գինոշարական դատէ էր, վասն զի անոր պատերագմական մանրամասն նկարագրութեանց մէջ՝ ռազմագիտական հրմտութիւն կը տեսնուի³։

Սակայն Լա-Կրոս իւր ժխտողական դրութեամբ խիստ յառաջ մղեցաւ. նա լրջօրէն կը պնդէր թէ Խորենացին՝ բաց ի այլ աղբիւրքս՝ օգտուած է նա և Յովսէփայ Գորիոնի յիշոյալի պատմութենէն, որ շարադրուած է Յովսէփայ Փլաւիոսի նմանութեամբ՝ երբայնցի լեզուով՝ մօտ Թրք դարու յետ Քրիստոսի, բայց հեղինակէն Յովս. Փլաւիոսէն աւելի հին ժամանակի վերագրուած (Ան դարուն յետ Ք.)։

Լա-Կրոսի այդ Հայեցումներն, որպէս յայտ է, բաժնեցին իրմ Հոլլանդացի Հայագետ Յովակիմ Երոյնդերբի, հեղինակ Վանա ձայան հայկական լեզոյի (Thesaurus linguæ armeniacæ) ծածոթ երկասիրութեան, յայեալ յԱմստերդամ յամի 1711⁴։

Մինչդեռ այսպիսի գաղափարք յազդուէին Խորենացւոյն նկատմամբ, և ահա ի 1736 յերեւան եկաւ ի Լոնդոն, հանդերձ հայկական բնագրաւ, ամբողջական լատին թարգմանութիւն մի « Պատմութեան Հայոց » ի ձեռն վիճառներն յիշեալ երկու եղբարց։ Թարգմանութիւնն ճոխացուած էր շատ և կարեւոր ծանօթութեամբք, որք կարգուած էին ի լուսարանութիւն Խորենացւոյն պատմութեան մօթ, տարակուսական և մերթ նա և խառնակ տեղեւն։ Իսկ այսպիսի տեղեր անոր մէջ սակաւ չէին, մանաւանդ ի պատճառս՝ անոր

մեռաւ ի Բերլին ի 1739 ամին։ Տես ի զաղջ. «Նոր Եկնագիր-Քիւմ ընդհանուր» հրատ. ի Փիթերն Գիթհոտէ, հտ. 46, յէջ 72-73. Պարբ., 1866. — Նոյնպէս նա և ի «Եռայ-ձայերէն Էրեւնոյց կայսեր. Գրատմ. Վիշնայ» ի Հ. Յակոբոսէ Տաշեան, Վիեննա, 1891, յէջ 54-37։

1. Լա-Կրոսի թղթակցութիւնք հրատարակուեցան յետ իրեն մեռաւուն յերիս հաւորաւ. ի Լէիպզիգ, յամի 1742-1746, հետեւեալ խորագրով. «Գովոյրտե Լա-կրոսիս Եպիստոլանայ» (Thesaurus epistolici Lacroisiani ex Bibliotheca fordianiana, edidit Io. Ludovicus Uhlius Սիս ահա թղթակցութեանցմէ տեղեկացայ և Եղեհոյի Ողբին Լակրոսեան հրատարակութեան, զի քուն զբոյնից գծարդգրաբ կարող չեղայ դանել։ Տես հտ. Ա. յէջ 352-353։

2. Գանձ. Լակրոս. Նամակ. հտ Ա, յէջ 358-359. հտ. Գ. յէջ 184։

3. Տես ի Լաո. Թարգմ. Պարմ. Հց. Մ. Խորեն. ի ձեռն Վիսա. Եղբ. Լոնդոն, 1736, 40, գիրք Բ, գլուխք 6, 7 և 54։

4. Ի թղթին որ առ Վիլ. Վիստոն, ի 24 Ապր. 1750, Լա-Կրոս հետեւեալք կը գրէ «.... De Mose Chorenensi sententiam meam leges in annotationibus meis ad carmen historicum Nersis Claiensis. Iterum aliquid addo: Eum Mosem vixisse puto circa nonum vel decimum seculum tempore principum Bagratunensium, qui ea aetate magna auctoritate et quodam imperii genere in Armenia pollebant. Praeterea eundem puto militem fuisse, observavi enim eum excellere in primis in descriptione pugarum...» (հտ. Գ. յէջ 281)։

5. Գանձ. Լակրոս. հտ. Ա, յէջ 356-357. Նոյնպէս և Լաո. Թարգմ. Վիստոն, յէջ 408, 411, 412, 414, 417, 421, և այլն։

8. Գանձ. Լակրոս. Նամակ., հտ. Ա, յէջ 356։

առաջին հրատարակութեան օրինակին ձեռն
նամուխ լինելուն, զոր Վիստոնը իրբեւ հիմն
առին իրենց թարգմանութեան: Արդ ի լուս
տաբանութիւն այդ հիմնական քննարկին նոքա
դնէին նա և Լէիպզիգի մատենադարանին
մեծագործին տարբերութիւնը, զորս հաղորդած
էր նոցա Լա-Կրոս, որ սակայն և այն ձեռ
նամուխ գրչագրաց դասէն էր: ԶԽորենացիին
ի լատին թարգմանողաց մօտ՝ թաց աստի
կային նա և ուրիշ անձնանամուխ գրչագրի
մի տարբերութիւնը, զոր հաղորդած էր նոցա
Շրոյեգեր, բայց՝ ինչ որ տեսնուի՝ նոքա վերջ
նոյա առանձինն կարեւորութիւն մի չէին ըն
ծայիր:

Գիտուն թարգմանիչը իրենց զորոշյն յա
ռաջարանին և ծանօթութեանց մէջ, ըստ կա
րելոյն կը շնային հերքել ժամանակակից
երկու ծանօթ հայագիտաց՝ Լա-Կրոսի և
Շրոյեգերին յայտնած այնքան ձախողակ գա
ղափարները Խորենացւոյն նկատմամբ: Վիս
տոնեանց ասելով՝ Հայ պատմագրին բոլոր
յանցանքն յայնմ էր, որ նա կարի յոյժ հա
ւասաց ընծայել իւր սորերաց, մինչդեռ ա
նոնք յանայի առասպելներ կ'աւանդէին. իսկ
ինքն պատուաւոր և ճշմարտախօս մարդ էր,
և իւր գրուածոց մէջ աւելի զստեանք կայր
քան թէ խարէութիւն. և թէ չլատ աւոր Պատա
մութեան մէջ յաճախ կը հանդիպին տարա
կուսական կամ նոյն իսկ կեղծ վկայութիւնք,
այնու չի հետեւիր թէ ամբողջն այլ մերժելի
է իբրեւ ամենեւին անօգուտ¹:

Իսկ զառով այն թուականին՝ յորում կ'ա
պրէր Խորենացիին, Վիստոնեանք անհնար
զատեցին ընդունիլ Լա-Կրոսի արած առա
ջարկութիւնը, որով նա Թ-Ժրդ զարու կու
վերագրէր զՀայ պատմագիրը. ուստի և յեն

րով նորին իսկ պատմագրի վկայութեան վրայ՝
կը համարէին զնա մատենագիր Եւրդ զարու²,
Առ հասարակ Խորենացիին ի լատին թարգ
մանողաց ցուցած պաշտպանութիւնն ընդդէմ
Լա-Կրոսի յարձակմանց՝ ոչ առանձին այժ
մե և ոչ ալ Համադականութիւնն կ'ընծայէ:
Ըստ իս չափով ինչ յալոդութեամբ ջանա
ցած են հերքել հեմուտ քննադատին կարծիքը
նկատմամբ հայ պատմագրին օգտուելուն՝
Թ-Ժրդ զարու Յովսէփ Գորիոնիզայի կեղծ
պատմութեանէն:

Զի մինչ Լա-Կրոս մատենանիշ կ'անէր նոցա
այս երկու պատմագրաց ինչ ինչ պատմու
թեանց յերեւար նմանութիւնը, Վիստոնը ոչ
առանց հիման կը բացատրէին զայն, թէ
Խորենացւոյն և թէ Գորիոնիզայի հասարա
կաց պատմագրէ մի օգտուելով, որ էր նոյն
ինքն Յովսէփ Փլաւիոս, առ որ և յաճախ կը
յգէ իւր գրոց մէջ նա և Հայ պատմագրին
(Ա. 4. Բ. 10, 15, 26, 35): Լա-Կրոսի
գորաւորագոյն փաստն, որով կ'ապացուցա
նէր Խորենացւոյն փոխառութիւնը ի Գորիո
նիզայի, յայնմ հաստատուած էր, որ մի և
նոյն պատմութեան մէջ Բաշաւմ բառն (Βά
σσημον ի գիրս Յովս. Փլաւիոսի, De Bello
Jud. I, VI, 6) երկու պատմագրացս մօտ այլ
նոյն apersaman³ — ապրաւմ ձեւով կ'երեւին:

Բայց այս երեւոյնը, ըստ Գիտոնեանց,
կը ցուցնէր՝ թէ Հայք ծանօթ էին երբայա
կան բալասանին՝ նոյն իսկ անոր երբայա
կան անուամբ՝ որ տարածուած էր յարեւելս⁴:

2. «Quito eum saeculo vixisse, — գրէր Գ. Վիս
տոն առ Լա-Կրոս վերոյիշեալ նամակին մէջ, — id
quod credi voluit, nullam video satis justam cau
sam quare valde negemus, quam ea res omnium
scriptorum Armeniorum, ac praesertim Nersia
Clajensis testimonio comprobetur, neque ullis ar
gumentis, ex ipsa historia petitis refutari posse
videatur, etsi ut, verum fateamur, nonnulla loca
nobis, aequae ac tibi suspicionem serupulumque
injiciunt...» (Գառն, Լաւրոս, նամակ, Ա. յէջ 361):

3. Այդ բառն սպգեւս զարու և Յովսէփ Գորի
ոնիզայի Գորիոսեան կրտսերակութեան մէջ, առ որ կը
յգին Վիստոն եղբայրն. իսկ ի կրտսերակութեան
Ռէէիթաւսթի (Breithaupt, Gotha et Lipsiae, 1710,
յէջ 526) — զարու և՛ apharsemon.

4. Non possumus quin miremur, — գրէր ի մէջ
այլ բանից՝ Վիլհելմ Վիստոն առ Լաւրոսի 25 դեկտ
1731, — quomodo tu, vir doctissime, pariter cum
Schroedero, induxeritis in animum, quae testimo
nia ex Josepho produxerit Chorenensis, ea՛ ex Go
ronia deprompta fuisse auspicari; quum non so
lum res a Chorenense memoratae, sed totum ora

1. «... Scriptor videtur fuisse, — գրէր Գեորգ
Վիստոն առ Լա-Կրոս 149 յուլ. 1755 ամին) Խորե
նացւոյն նկատմամբ, — medicoriter tantum doctus
et majore credulitate quam iudicio ex aliorum
scriptis historiam suam composuisse, sed tamen
fidus atque probus atque errore magis, quam
culpa, saepius incerta falsave tradidisse...» (Բայց
նախ քան զայս նշել Գ. Վիստոն գրէր (1750) առ
Լա-Կրոս Խորենացւոյն պատմութեան վերջոց ի մէջ
այլոց՝ նա և նկատեալ խօսքը. «... Neque enim hi
storiae ejus defensionem per omnia suscipimus,
et, si saepius falsa est, non continuo pro inutili
ac rejectanea haberi debet...» (Գառն, Լաւրոս,
նամակ Ա. յէջ 361-362, և 358-359. հմտ. նա և
ի յառաջաբանի վիստոնեան լատին թարգմանութեան,
յէջ Ժ-Ի):

— Սակայն որ ինչ և լինի, թէպէտ և ապրրսամ բառն խորեննացին Գորիոնիւպէն փոխ առած չլինի, բայց և այնպէս այդ բառն հին չէ, զի չեմք հանդիպիր նախ քան Բորդար, մինչդեռ Բաղասմեհ կու բարձրանայ ի Երդ դար 1:

Ծանօթ չէ ինձ թէ արդեօք Լա-Կրոս Վիստոնեանց փոստերուն ընդդիմադրող պատասխան մի տուաւ թէ ոչ, կամ թէ ըսել նա որ և է բան գրեց թէ ոչ խորեննացոյն վրայ, յետ ի լոյս ընծայուելու « Պատմութեան Հայոց » լատին թարգմանութեանն: Այս բանին վերաբերմամբ իւր նամակաց մէջ ոչ ինչ յիշատակ չկայ. այլ և ինքն իսկ Լա-Կրոս արդէն այնուհետեւ վաղ մեռաւ (1739):

Բայց իւր մահուան տարին հրատարակած հետաքրքրական գրուածքին մէջ, « Պատմութեան քրիստոնէութեան յԵթովպիա և ի Հայս », հարեւանցի կերպով իւր նախկին կարծիքը նորէն կրկնէ, այսպիսի բացատրութեամբ. «... Մովսէս խորեննացին, հեղինակ՝ զոր հինգերորդ դարու կը վերագրեն: Իս գնա առեւի նոր կը կարծեմ. թէպէտ հընուութիւն մի ունի, հայերէն գրութեան ոճն զուտ լինելով, բայց ծայրալիւր խառն է առասպելաց հետ » 2:

tionis filum, atque ipse rerum contextus longissime a Gorionide discrepent; quia et ipsissimas Iosephi voces Graecas saepius Armeniace reddidisse videtur Moses, id quod cuivis Graeca Iosephi cum Armeniacis conferenti facile, credo, persuasuri sumus. Nam quod ad vocem *Apersamon* attinet, quam Moses aequae ac Gorionides usurpat, nihil inde sequitur, nisi id nomen Chorenensis temporibus balsamo Judaico in oriente datum fuisse...

(Գրան. Լուկրոս. նամակ. Ա, յէջ 386-387. հմտ. նու և ի լատին թարգմ. խորեննացոյ յէջ 111, ծանօթ. յ. 1. Տես ի Հայկական Բառագիրս, Վննեակ, 1836-1837, ի բառն՝ Ալլոսմ, Բաղասմեհ և Բաղասմա)

2. « Moïse de Choren, Auteur que l'on rapporte au cinquième Siècle. Je le crois plus récent quoique pourtant il ait quelque antiquité, son stile arménien étant pur, mais extrêmement mêlé de Fa-

իս մտադիր տեղի կ'առնուի Վիստոնեան եղբարց հրատարակութեան վրայ, նախ զի այն ծառայած է հետեւորդ թարգմանողաց խորեննացոյն իբրու ճոխ ատաղձ, և երկրորդ, զի գիտուն հրատարակողքն՝ յառաջ բերելով կարգ կարգ աւելի կամ նուազ հիմնական ընդդիմադրութիւններ հակառակ Լա-Կրոսի և Շրոյեդերի, միանգամայն կարգած են նա և ոչ սակաւ առարկութիւնս նոյն իսկ ընդդէմ ինքեանց:

Վերագոյն յիշեցի թէ Վիստոնեանց թարգմանութիւնն ճոխացած էր բաղմամբիւ պիւտանի բացայայտիչ ծանօթութեամբը: Սոցա թուէն աւելի հետաքրքրալարժ են այն ծանօթութիւնք, որ նուիրուած են ի հաստատութիւն ասից խորեննացոյ, որ է տսել՝ անոր Պատմութիւնը արգարացընելու պաշտօնն ունին: Այս նպատակաւ ի մէջ բերուած են վերկայութիւնք գրեթէ ամենայն ծանօթ վաղեմի յոյն և հռովմայեցի և նոյն իսկ բիւզանդական և մի քանի Հայ և ասորի մատենագրաց, սկսեալ ի Հովերոսէ և Հերոդոտիս մինչև Արուլ Ֆարաբն, որ մեր թուական նիս յիսուս դարու հեղինակ է, ընդ ամենն ոչ նուազ քան 50 գրուածք, առ որս կը յղուի և յորոց մերթ՝ ըստ պատշաճի իւրաքանչիւր տեղեաց՝ ամբողջական հատուածք յառաջ կը բերուին: Ասոնցմէ ես կ'ընշանեմ հետեւեալքը՝ եկեղեցական պատմիչն Սոկրատ, անվաւերական վարք Ս. Սեդրեատրոսի, Պրովպիոս Կեսարացի, Ժամանակագիրն Մարտա, Չառկական քրոնիկոն, և հուսկ Սուրբաս: խորեննացոյն լատին թարգմանիչք իրենց յաճախեալ յղումներով մանաւանդ առ այս գրութիւններ, յորոց իրենք՝ բոլորովին ուրել նըպատակաւ՝ հատուածս ի մէջ բերէին, միանգամայն եւս, որպէս վերեւ ըսիք, գէնք կու տային նոյն իսկ ընդդէմ ինքեանց: Այս մասամբ պիտի խօսիմք յառաջիկայս:

Շարադարեղի

bles». *Hist. du Christianisme d'Ethiopie et d'Arménie*, à la Haie, յէջ 355: